«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«16» հունվարի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____Հ. Թունյան

ԳԲԽ-48/14 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Լիգա պլյուս» ՍՊԸ-ի 30.12.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Լիգա պլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Լիգա պլյուս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 30.12.2014թ. ներկայացրած բողոքում նշել է, որ «Մովսես Ջանբազյանի անվան Հ. 79 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «79 ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցել են «Ֆոտոն» և «Լիգա պլյուս» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2014թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հայտ ներկայացրած մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան (մասնակիցների հայտում առկա են եղել հրավերով սահմանված փաստաթղթերը): Նշված արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը համապատասխանում է Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության, բացառությամբ, որ ներկայացված փաստաթղթերի մեջ ընթացակարգին մասնակցելու դիմումը գրված է այլ դպրոցի (Երևանի թիվ 100 դպրոցի) ծածկագրով և տվյալներով: Հանձնաժողովի քարտուղարը գնահատող հանձնաժողովին է ներկայացրել, որ այլ դպրոցի տյալներով ներկայացրած գնման ընթացակարգին մասնակցելու դիմումի առկայությունը հիմք է, որպեսզի մերժվի «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը: Սակայն գնահատող հանձնաժողովը ոչ միայն չի մերժել այդ ճչացող անհամապատասխանությամբ ներկայացված հայտը, այլև արձանագրության 5-րդ կետի «ա» ենթակետով հաղթող մասնակից է ճանաչել «Ֆոտոն» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած՝ «Լիգա պլյուս» ՍՊԸ-ին:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում պետք է մերժեր նրա կողմից ներկայացված հայտը՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, այն է՝ բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է չեղյալ հայտարարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2014թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետի «ա» ենթակետով «Ֆոտոն» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը և վերջինիս ներկայացրած հայտը մերժել:

2. «Մովսես Զանբազյանի անվան Հ. 79 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Լիգա պլյուս» ՍՊԸ-ի 30.12.2014թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ Պատվիրատուն 14.01.15թ. թիվ 892 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն առաջնորդվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի դրույթներով, համաձայն որի հայտի մերժման հիմք կարող էր հանդիսանալ միայն նշված կետի «3) ա» ենթակետի դրույթը. հայտը մերժվում է ծրարը գնահատվելու արդյունքում անճշտություն հայտանբերելու դեպքում: Հանձնաժողովը «Ֆոտոն» ՍՊԸ-ի գնման ընթացակարգին մասնակցելու հայտում դիմումի անճշտությունը համարել է վրիպում և, հիմք ընդունելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի շրջանակային համաձայնագիր կնքած մասնակից լինելու հանգամանքը, գնահատող հանձնաժողովը հայտը համարել է հրավերին համապատասխանող՝ նախապատվություն տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ ի շահ դպրոցի:

3. ԳԲԽ-48/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Լիգա պլյուս» ՍՊԸ-ի 30.12.2014թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Մովսես Զանբազյանի անվան Հ. 79 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 14.01.2015թ. թիվ 892 գրությունը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և գնման ընթացակարգին մասնակցելու «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած դիմումը, հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-48/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Մովսես Զանբազյանի անվան Հ. 79 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «79 ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթաց-

կարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Ֆոտոն» և «Լիգա պլյուս» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը:

3. Գնման ընթացակարգին մասնակցելու «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա է եղել «N 100 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «ՇՀԱՊՁԲ-11/2-100» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը, այսինքն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայել է «79 ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու վերջինիս դիմումը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2014թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացվել է որոշում, այն է՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները համապատասխանում են «79 ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության, բացառությամբ, որ ներկայացված փաստաթղթերի մեջ դիմումը գրված էր այլ դպրոցի ծածկագրով և տվյալներով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովին ներկայացրել է, որ ըստ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման՝ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի, այդ դիմումի առկայությունը հիմք է, որպեսզի մերժվի «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը: Սակայն, հանձնաժողովը որոշել է, որ այդ վրիպակը մերժման հիմք չէ և չի մերժել «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2014թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացվել է որոշում. «Հաղթող մասնակից ճանաչել, 1-ին տեղ շնորհել և «79ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի պայմանագիր շնորհել «Ֆոտոն» ՍՊԸ-ին՝ 1 624 310 /մեկ միլիոն վեց հարյուր քսանչորս հազար երեք հարյուր տաս/ ՀՀ դրամ գնով (առանց ԱԱՀ), 1 949 172 /մեկ միլիոն ինը հարյուր քառասունինը հազար հարյուր յոթանասուն երկու/ ՀՀ դրամ գնով (ներառյալ ԱԱՀ), 2-րդ տեղ շնորհել «Լիգա պլյուս» ՍՊԸ-ին՝ 2 144 720 /երկու միլիոն հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր քսան/ ՀՀ դրամ գնով (առանց ԱԱՀ), 2 144 720 /երկու միլիոն

հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր քսան/ ՀՀ դրամ գնով (ներառյալ ԱԱՀ) և արդյունքների վերաբերյալ ծանուցել մասնակիցներին»:

4. ԳԲԽ-48/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում:

Վերը նշված հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 110-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում հայտը ներառում է շրջանակային համաձայնագիր կնքած անձի կողմից հաստատված գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը և գնային առաջարկը:

Կարգի վերոնշյալ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հանձնաժողովը գնահատում է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված ծրարները: Անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում գնահատող հանձնաժողովը մերժում է այդ հայտերը:

Վերոնշյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտնաբերելով, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայում է Հրավերով պահանջվող գնման ընթացակարգին մասնակցելու մասին վերջինիս դիմումը, այսինքն՝ պարզելով, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, չի կիրառել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը և չի մերժել «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Հարկ է նշել, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի՝ Հրավերով նախատեսված պայմանների անհամապատասխանության մասին հայտնաբերվել և արձանագրվել է գնահատող հանձնաժողովի 24.12.2014թ. ժամը 14.30-ին կայացած նիստում, սակայն հանձնաժողովը, անտեսելով Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, «Ֆոտոն» ՍՊԸ-ի այլ ծածկագրով և տվյալներով ներկայացրած գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը համարել է վրիպակ և արձանագրության 3-րդ կետով որոշում է կայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը չմերժելու մասին:

Նման պայմաններում, քանի որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանել Հրավերով նախատեսված պայմաններին՝ հայտում բացակայել է «79 ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու մասին վերջինիս դիմումը, իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ուստի առաջարկում ենք «Լիգա պլյուս» ՍՊԸ-ի 30.12.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2014թ. թիվ 2 արձանագրության 3-րդ և 5-րդ կետերով կայացրած որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ — Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ — Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ — Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-48/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար — Մ. Մանուկյան